ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ ---------------------- Հ. Դավթյան

«----------» ----սեպտեմբեր---- 2022թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆԾՐԱԳԻՐ

Մ.Գալշոյանի անվան 148 ավագ դպրոց

ուսումնական հաստատության անվանումը ,

$12^{4}$(ՏՀՏ հոսք) դասարան

Կթունյան Հայկուշ Աշոտի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2022- 2023 » ուսումնական տարի

# Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1)Ներածություն/դասարանի ընդհանուր բնութագիր/

2022-2023ուստարվա սկզբին դասարանում սովորում են 25 աշակերտներ՝ 23տղա, 2աղջիկ: Չնայած աշակերտներից 3-ը նորեկներ են՝այնուամենայնիվ դասարանում ձևավորվել է համերաշխ կոլեկտիվ: Բոլորն էլ ակտիվ, աշխույժ երեխաներ են: Դասարանում առկա է ուսումնական գործընթացի կազմակերպման համար բարենպաստ մթնոլորտ:

2)Ուսումնադաստիրակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում:

Այս ուստարվա ընթացքում նախատեսվում է անցկացնել զրույցներ, քննարկումներ և միջոցառումներ այնպիսի թեմաներով, որոնք կնպաստեն մտածված որոշումներ կայացնելուն, ժամանակը ճիշտ կառավարելուն, մասնագիտական ճիշտ կողնորոշմանը, սեփական կարողությունների և հմտությունների գնահատմանը,մայրենի լեզվի, ազգային ավանդույթների և արժեքների պահպանմանը,կքննարկվեն բարոյական չափանիշների և համամարդկային արժեքներին առնչվող թեմաներ:

## 3.Հայեցի դաստիարակություն.

### 3.1Հոգևոր դաստրարակություն.

Զրույցներ անցկացնել բարոյական չափանիշների, համամարդկային արժեքների վերաբերյալ՝ ընդգծելով անձի մեջ բարին,պատասխանատվությունը, հանդուրժողականությունը: Կարևորել հայ քրիստոնեային վայել ապրելու սկզբունքները:

### 3.2 Գեղագիտական դաստիարակություն

Զարգացնել գեղագիտական ճաշակ՝ կազմակերպելով այցելություններ պատմամշակութային տարբեր կենտրոններ, թատրոններ, ցուցահանդեսներ: Առաջնային համարել գեղեցիկը առժևորելու կարողունակությունը:

### 3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն.

Կարևորել հայեցի դաստիարակությունը, քանզի այս բարդ շրջանը կարող ենք հաղթահարել մեր ավանդույթները պահելով ու արմատներին ամուր կառչելով, բարձր պահելով հաղթական ոգին:

Քննարկել հայ ժողովրդի պատմության էջերը և առաջ քաշելով ազգային հիմնախնդիրները՝ ընդգծել յուրաքանչյուր հայի դերը հայրենիքի պահպանման ու զարգացման գործում:Կարևորել հայրենիքին ծառայելն ու մեր սուրբ նահատակների կիսատ թողած գործը շարունակելը:

### 3.4 Ֆիզիկական դաստիարակություն.

Հատուկ ուշադրություն դարձնել ֆիզիկական դաստիարակությանը:Կարևորել ֆիզկուլտուրա առարկայի դասավանդումը, վարել զրույցներ առողջ ապրելակերպի վերաբերյալ:

### 3.5Աշխատանքային դաստիարակություն.

## ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՀԻՄՆԱԿԱՆԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ

Սեպտեմբեր

1շաբաթ —Դպրոցի կարգուկանոնի իրազեկում, ավագի ընտրություն, դասացուցակի ճշտումներ

2շաբաթ— Զրույց <<Հարգալից փոխհարաբերություններ, առողջ կոլեկտիվ>>—թեմայով

3շաբաթ———Զրույց՝ նվիրված ՀՀ անկախության 31 ամյակին

4շաբաթ—Տագնապի օրեր, առաջին անհրաժեշտության իրեր, ապաստարաններ

Հոկտեմբեր

1շաբաթ —Զրույց <<Հանճարն անգամ ուսուցիչ է ունեցել...>>

2շաբաթ— Զրույց <<Երևանը քար ու շենք չէ, Երևանը մենք ենք...>>—թեմայով

3շաբաթ———Զրույց-քննարկում ,,Ես մի ծիլն եմ քո արտի , հայրենի երկիր...''

Նոյեմբեր

2շաբաթ —Հայրենիք, ազգ,մայրենի լեզու; Ինչքանով ենք յուրաքանչյուրս պատրաստ պահպանելու մեր ազգայինը:

3շաբաթ———<< Հայկական մշակույթ>> թեմայով

4 շաբաթ—Ինչպես կողմնորոշվել տղանքում. ինչպիսի դիտարկումներ անել

Դեկտեմբեր

1շաբաթ —Երկրաշարժ... Հայ ժողովրդին պատուհասած աղետը

2շաբաթ— Զրույց <<Նպատակ և սկզբունքներ>>թեմայով

3շաբաթ–Ամանորի խորհուրդը

4շաբաթ—Առաջին կիսամյակի ամփոփում։

Հունվար

2շաբաթ— Զրույց՝ <<Ապրել և արարել աստվածահաճո>> թեմայով

3շաբաթ____Մեր օրերի հերոսը 18 ամյա խիզախ հայ զինվորն է

4շաբաթ—Զրույց<<Հայոց բանակի նվիրյալները>>

Փետրվար

1շաբաթ —Զրույց<<Մարդն ընտանիքում և հասարակության մեջ>> թեմայով

2շաբաթ—Եկեղեցական տոներ։

3շաբաթ – Գիրք, Ընթերցանություն, համացանց

4շաբաթ—Բարոյական արժեքներ, որ իմաստավորում են մեր կյանքը

Մարտ

1շաբաթ —Կանանց միջազգային օր: Կնոջ դերը հասարակության մեջ և ընտանիքում:

2շաբաթ— Զրույց <<Ինքնատիրապետում և հարգանք>>թեմայով:

3շաբաթ- Փոխզիջում, հանդուրժողականություն, ներողամտություն:

4շաբաթ—Այցելություն որևէ մշակութային օջախ

Ապրիլ

1շաբաթ— Բարություն և ժպիտ

2շաբաթ— Մայր... Հերոս ծնած մայրեր

3 շաբաթ— Այցելություն Ծիծեռնակաբերդ

4շաբաթ____Զրույց <<Անկոտրուն կամք, հույս և հավատ սեփական ուժերի հանդեպ>>

Մայիս

1շաբաթ__Աշխատավորի մի  ջազգային օր

2շաբաթ—Մենք հաղթել ենք ու էլի կհաղթենք

3շաբաթ-Վերջին զանգի միջոցառման նախապատրաստում

4շաբաթ-Ուստարվա ամփոփում, էքսկուրսիայի կազմակերպում